

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

09.07.2011թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյան, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ. Հովսեփյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ.Նշանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը:

Նիստում լսվեց հետևյալ հարցը.

1. «ՀՀ 2011 թվականի մարդահամարի հարցաթերթը», «ՀՀ 2011 թվականի մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին հրահանգը», «Տեղեկանք ՀՀ 2011 թվականի մարդահամարն անցնելու մասին», «Գրություն այն անձանց, ում դժվար է տանը գտնել», «ՀՀ 2011 թվականի մարդահամարի հսկիչ թերթը», « ՀՀ 2011 թվականի մարդահամարի վերահսկիչ փաստաթուղթը», «Ձև թիվ 9-ի հավելված 1 վերահսկիչ շրջագայության ամփոփագիրը», «Ձև թիվ 14 հրահանգիչ-հսկիչի հաշվետվություն», «Ձև թիվ 15 մարդահամարի տեղամասի վարիչի հաշվետվություն», ինչպես նաև «Ձև թիվ 16 մարդահամարի գործերը ՀՀ ԱՎԾ մարզային և Երևան քաղաքի գործակալություններում համակարգողի հաշվետվություն» ձևաթղթերի նախագծերը հաստատելու մասին» հարցը:

/Ջեկուցող՝ Գ.Նշանյան/

Որոշվեց՝

Հաստատել «ՀՀ 2011 թվականի մարդահամարի հարցաթերթը», «ՀՀ 2011 թվականի մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին հրահանգը», «Տեղեկանք ՀՀ 2011 թվականի մարդահամարն անցնելու մասին», «Գրություն այն անձանց, ում դժվար է տանը գտնել», «ՀՀ 2011 թվականի մարդահամարի հսկիչ թերթը», « ՀՀ 2011 թվականի մարդահամարի վերահսկիչ փաստաթուղթը», «Ձև թիվ 9-ի հավելված 1 վերահսկիչ շրջագայության ամփոփագիրը», «Ձև թիվ 14 հրահանգիչ-հսկիչի հաշվետվություն», «Ձև թիվ 15 մարդահամարի տեղամասի վարիչի հաշվետվություն», ինչպես նաև «Ձև թիվ 16 մարդահամարի գործերը ՀՀ ԱՎԾ մարզային և Երևան քաղաքի գործակալություններում համակարգողի հաշվետվություն» ձևաթղթերը համաձայն հավելվածների:

/Անհատական/

21.07.2011թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Յու.Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Զ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմ ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ. Հովսեփյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշվեց՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ տողի «531815.6» թիվը փոխարինել «532007.6» թվով, 4-րդ տողի «73331.9» թիվը փոխարինել «75853.3» թվով, իսկ ընդամենը տողի «690146.6» թիվը՝ «692860.0» թվով:

/Անհատական/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի հունիսի 27-ից հուլիսի 1-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Կոմունիկացիաները վիճակագրությունում» և «Մարդահամարի տվյալների տարածում և համագործակցություն» խորագրով աշխատանքային հանդիպումներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/

2.2. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի հուլիսի 11-ից հուլիսի 13-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի էկոլոգիական քաղաքականության կոմիտեի ու Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի կողմից համատեղ կազմակերպված էկոլոգիական ցուցանիշների ներդրմանն ու օգտագործմանը նվիրված Եվրոմիության, Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի երկրների բնապահպանների և վիճակագիրների միասնական նպատակային խմբի խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

24.08.2011թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԻ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԻ անդամներ Գ. Անանյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԻ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Զ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին» Ձև թիվ 1 (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Ավագյան/

Որոշվեց՝

Հավանություն տալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին» Ձև թիվ 1 (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին մարդահամարի անցկացման ժամանակ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ծառայող Հայաստանի Հանրապետության դիվանագետների և նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների

հաշվառման և մարդահամարի հարցաթերթի լրացման ուղեցույցի հաստատման մասին» հարցը:

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

Որոշվեց՝

Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին մարդահամարի անցկացման ժամանակ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ծառայող Հայաստանի Հանրապետության դիվանագետների և նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների հաշվառման և մարդահամարի հարցաթերթի լրացման ուղեցույցը» համաձայն հավելվածի:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2011 թվականի հունիսի 20-ից հունիսի 21-ը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հրավերով TRANSMONEE ծրագրի շրջանակում անդամ-երկրների համակարգողների հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Պեպրոսյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/